բոնեցու աշակերտներից էր և հաստատուած էր նախ Աստապատում և ապա Սուհարայի կամ Խառաբաստայ վանքում՝ ՊԼԸ—ՊԾԱ թուականը։ «Եւ ժողովեցան առ նա բազումք ի գրոց աշակերտաց և ի կրօնաւորաց և յուսումնասիրաց աւելի քան 60 կարգաւորք և ուսումնականք»*։ Նորան աշակերտութեան է գալիս և Թովման ՊԽԴ(=1395) թուին, արդէն 17—20 ամեայ պատանի։ Սարգիս վարդապետը մեռնում է ՊԾ—ՊԾԱ թուականին և նորան յաջորդում է իւր իսկ աշակերտներից Վարդան մինչև ՊԾԵ թուականը, երբ հալածուելով թշնամիներից՝ փախչում է Սալնապատու վանքը և այնտեղ վախճանւում։** Թովման դովասանքով և երախտագիտութեամբ է յիշում Սուհարայի ուսուցիչներին, առանց տեղեկութիւններ տալու իւր ուսած առարկաների մասին։*** Այդ թերին լրացնում է Կիրակոս Բանասէրը, յայտնելով, թէ նա այնտեղ ուսել է «զԴ եղանակս վարդապետական, որ է սահմանական, բաժանական, ապացուցական, վերլուծական», հետևողութեամբ Արիստոտէլի, ինչպէս որդեգրած էին ԺԴ. դարու Հայոց վարդապետները, գլխաւորապէս Տաթևի դպրոցի ներկայացուցիչները։ Թովմայի աւագ ժամանակակից Յակոբ Ղրիմեցին, օրինակ, իւր տօմարական մակացութիւնների «Յաղագս թուականի» գլխի մէջ նոյն եղանակն է գործադրում։ Այս տեղեկութիւնից երևում է, որ Թովման իւր փիլիսոփայական հմտութեան մի մասը, որ թուում է Կիրակոս, մասամբ այստեղ էր ստացել։

Թովմայի ուսման երրորդ շրջանն ընկնում է ՊԾԶ—ՊԾԹ թուերին։ Վարդան վարդապետի մահուամբ՝ ՊԾԵ թուին՝ որբ են մնում նորա աշակերտները։ Դոցանից 12 հոգի, որոնց թուում և Թովման, գնում են Տաթև, որ այդ ժամանակ արևելեան Հայաստանի լուսաւորութեան առաջին կեդրոնն էր Գրիգոր Տաթևացու վարժապետութեամբ։ Ժամանակի եպիսկոպոսն էր Տ. Առաքել, Տաթևացու քրոջ որդին և աշակերտը, ինքն էլ բանասէր և «իմաստասէր», յայտնի իւր տաղերով, Ադամ գրքով, քերականութեամբ և Սահմանաց գրքի լուծմունքով։ Տաթևացու շուրջն էին խմբուած այդ ժամանակ 60-ից աւելի աշակերտներ, որոնցից մի քանիսը նշանաւոր հանդիսացան մեր պատմութեան և գրականութեան մէջ։ Դոցա վերայ աւելանում են և Քաջբերունեաց երկրից եկած երիտասարդները։ Տաթևացին մեծ սիրով ընդունում է ուսումնատենչ երիտասարդներին, որ իւր հայրենակիցներն էին. «զի հայր նրա

---

* Նոր Նիւթեր. Ար. 753. 754|2. (16. 14/15)։ Մեծոփեցի. Պատմ. 50—55.

** Մեծոփեցի. Պատմ. 47. 55—57. 49. 41.

*** Բացի նախընթաց ցուցումներից տես եւ Նոր Նիւթեր. Ար. 754. 756. 759. 762. (17. 19. 22. 25)։